ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/75

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Բողոք բերող՝ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներ՝ Պ. Մկրտչյանի, Ա. Ասատրյանի, Ա. Գևորգյանի և Գ. Գալստյանի,

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Դ. Դավթյանի, ներկայացուցիչներ՝ Ա. Մարգարյանի և Ա. Գրիգորյանի,

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Տ. Սաֆարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, կոմպոզիտիվ սերվերների և տվյալների պահոցների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝

Ընկերություն) կողմից 08.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնահատող հանձնաժողովին՝

- «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով ընթացակարգի հրապարակված հրավերում և դրան կից տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ՝ բողոքով նշված հիմնավորումների և վերլուծությունների շրջանակում կամ վերացնել սույն բողոքում նշված թերությունները, կամ
- Չկայացած հայտարարել «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով հայտարարված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 08.09.2021թ.-ին:

09.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 համարի ծածկագիրը:

28.09.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա՝ Բողոքներ քննող անձի 29.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15833-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

17.09.2021թ.-ին, 05.10.2021թ.-ին և 08.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 05.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.10.2021թ.-ին:

2. <u>«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն 08.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի օգոստոսի 26-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգում և www.procurement.am,www.gnumner.am կայքերում հրապարակվել է ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարություն և հրավեր հայերեն և ռուսերեն լեզուներով:

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊ Ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) գտնում է, որ գնման ընթացակարգում Պատվիրատուն չի կատարել 19.07.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/50 որոշմամբ արձանագրված փոփոխությունները սույն գնման ընթացակարգի հրավերում և տեխնիկական բնութագրում, թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև Օրենք), Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև նաև Կարգ) դրույթների խախտումներ, խեղաթյուրել է գնման գործընթացի էությունը, բացառվել է մրցակցությունը և ղեկավարվելով Օրենքի 46-րդ, 47-րդ և 50-րդ հոդվածների պահանջներով, ներկայացնում ենք սույն բողոքը.

Բողոքի փաստական հիմքերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից 02.06.2021փ.- ին տեղեկագրում և www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակվել է ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 էլեկտրոնային աճուրդի հայտարարությունը և հրավերը:

2. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 10.09.2021թ. ժամը 14:00:

3. Գնման ընթացակարգի հրավերի «Գնման առարկայի բնութագիր» բաժնում նշված է.

1.1. Գնման առարկա է հանդիսանում պատվիրատուի կարիքների համար՝ «կոմպոզիտիվ սերվերների և տվյալների պահոցների» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	կոմպոզիտիվ սերվերներ
2	տվյալների պահոցներ

Ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածում:

4. Գնման առարկա է հանդիսանում Պատվիրատուի կարիքների համար՝ ««կոմպոզիտիվ սերվերների և տվյալների պահոցների» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև

ապրանք), որոնք խմբավորված են «2» չափաբաժնում, այլ ոչ թե առկա սերվերային համակարգի արդիականացումը:

5. Հրավերի թիվ 5 հավելվածում ներկայացված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածում որպես «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» նշված է կոմպոզիտիվ սերվերներ, տվյալների պահոցներ, որտեղ և որին կից ներկայացված տեխնիկական բնութագրերում 2 չափաբաժինների ամրագրված են միայն որոշակի թվային պահանջներ, այն դեպքում երբ նմանաբովանդակ գնումների կազմակերպման դեպքում գնման առարկայի հատկանիշներն սահմանելիս ներկայացվում են կատարողականի կամ գործառույթային նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշգրտությամբ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան, այլ ոչ թե արդեն իսկ ձեռքբերված համակարգին համապատասխան տեխնիկական բնութագրի նախագծում տվյալ առկա համակարգի չափանիշներին համապատասխան, առանց որևէ հստակ շուկայի ուսումնասիրության կատարման:

6. Տեխնիկական բնութագրում նշված 2 չափաբաժնում նշված «Կոմպոզիտիվ սերվերներ» ներքո Fiber channel ցանց և այլ մասերը նշանակությամբ, տեխնիկական բնութագրերով, նշանակությամբ խիստ տարբեր են, սակայն արհեստականորեն խմբավորված են մեկ չափաբաժնում:

7. Նշված տեխնիկական բնութագրում առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորվել են երկու չափաբաժնում, որով իսկ խախտել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետև Օրենք) 25-րդ հոդվածի 2-րդ կետը:

8. Հրավերի թիվ 5 հավելվածում ներկայացված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածում որպես «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» նշված է.

Ապրանքի			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	48821100/503	կոմպոզիտիվ սերվերներ	Տեսակ ՀՀ ՊԵԿ-ում առկա HPE Synergy 12000-ում տեղադրելու համար: Պրոցեսորների քանակ Յուրաքանչյուր սերվերի վրա առնվազն երկու հատ: Պրոցեսորի պարամետրեր 2 հատ 20-միջուկանի, 2.1Ghz հաճախականության, 2933MHz հաճախականությամբ DDR4 աջակցմամբ: Պրոցեսորների արտադրողականություն SPEC rate2017 integer result base՝ 223 միավոր: Օպերատիվ հիշողություն Ընդամենը 512ԳԲ՝ 16 միանման DDR4-2933 Dual Rank մոդուլներով: Հիմնական հիշողություն 2 հատ 480ԳԲ 2.5" SSD կրիչ: Ethernet ցանց 1 կոնվերգենտ քարտ 2

			Ethernet պորտերով՝ յուրանչյուրը 25/50 Գբիթ/վրկ: Fibre Channel ցանց 1 քարտ 2 Fibre Channel պորտերով՝ յուրանչյուրը 32 Գբիթ/վրկ Այլ պայմաններ. • Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: • Սարքերը և օժանդակ մասերը պետք է լինեն գործարարանային արտադրության: • Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և գործարկումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով, համաձայն արտադրողի կողմից խորհուրդ տրվող ճարտարապետության: • Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը: • Հրավերով պահանջվող սարքերի համար մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF): • Արտադրողի կողմից պետք է գործի 5 տարվա գործարանային երաշխիք՝ 24x7 ռեժիմում արտադրողի համակարգում սերվիս-դեպք գրանցելու հնարավորությամբ և առավելագույնը 4-ժամյա հետադարձ կապով: Վնասված կրիչները փոխարինումից հետո չեն վերադարձվելու մատակարարին կամ արտադրողին, ինչը պետք է արձանագրված լինի արտադրողի կողմից ներառվող գործարանային երաշխիքի նկարագրությունում:
2	30232230/501	տվյալների պահոցներ	Կոնտրոլերների նկարագրություն - առնվազն 4 ակտիվ կոնտրոլեր՝ տաք փոխարինման հնարավորությամբ - ընդհանուր 1TiB cache հիշողություն՝ 256GiB յուրաքանչյուր կոնտրոլերի վրա - առնվազն 32 հատ 32Gb Fibre Channel պորտեր - յուրաքանչյուր կոնտրոլերի վրա առնվազն 2 հատ 10Gb Ethernet առանձնացված պորտեր՝ նախատեսված տվյալների ապպարատային ռեպլիկացիայի համար - յուրաքանչյուր կոնտրոլերի վրա առնվազն 4 հատ SAS 12Gb պորտեր՝ նախատեսված սկավառակների դարակների միացման համար: Տեղադրված սկավառակներ 48x1.92TB SSD SAS 2.5" սկավառակներ: Համակարգի աճեցման հնարավորություն - առնվազն 26 հատ NVMe SSD կրիչներ տեղադրելու հնարավորություն - առնվազն 384 հատ SSD սկավառակներ տեղադրելու հնարավորություն - առնվազն 576 հատ HDD սկավառակներ տեղադրելու հնարավորություն - 1.92, 3.84, 7.68, 15.36TB SSD 2.5" սկավառակների աջակցում: Համակարգի ֆունկցիոնալ - ակնթարթային պատճեների ստեղծում (snapshots) - ամբողջական պատճեների ստեղծում (snapclones) - համակարգի կառավարման ծրագրային ապահովում - համակարգի արագագործության վերլուծության ծրագրային ապահովում - նեղ հատորների հետ աշխատելու հնարավորություն (Thin Provisioning) - համակարգը տրամաբանական հատորների բաժանելու հնարավորություն - Oracle, Microsoft Exchange, Microsoft SQL, VMware vSphere, Microsoft Hyper-V ծրագրային փաթեթների համար ակնթարթային կոնսիստենտ պատճեների ստեղծման հնարավորություն - VMware vCenter-ի հետ ինտեգրման հնարավորություն - Տվյալների դեդուպլիկացիա և սեղմում (Compression): Տվյալների ռեպլիկացիա - Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա միևնույն մոդելի այլ համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման - Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա առկա HPE 3PAR 8400 համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման: Համակարգի ադմինիստրավորում Համակարգը պետք է աջակցի "call home" ֆունկցիոնալ, որը թույլ է տալիս՝ - համակարգի խնդիրների դեպքում արտադրողի սերվիսային համակարգում ավտոմատ սերվիս-դեպքի գրանցում - հաշվի առնելով պատվիրատուի մոտ առկա միկրոկոդերի և ծրագրային փաթեթների տարբերակները (version)՝ առկա խորհուրդ տրվող թարմացումների ցանկի ավտոմատ տրամադրում - 10-բալային համակարգով գրել/կարդալու

			գործողությունների ժամանակ համակարգի արտադրողականության գնահատում: Մալուխներ և փոխարկիչներ Տվյալների պահոցը նաև պետք է ներառի բոլոր կոմպոնենտները արտաքին ենթակառուցվածքներին միանալու համար: Այդ կոմպոնետներն են՝ Ա. Էլեկտրական սնուցման աղբյուրին միացվող մալուխներ բոլոր հոսանքի մուտքերի համար Բ. Փոխարկիչներ տվյալների պահոցների բոլոր օպտիկական պորտերին միանալու համար Գ. Օպտիկական մալուխներ Բ կետում նշված բոլոր փոխարկիչներին միանալու համար Դ. Մալուխներ տվյալների պահոցի բոլոր կոնտրոլերները բոլոր դարակաշարերին միացնելու համար Այլ պայմաններ. • Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: • Սարքերը և օժանդակ մասերը պետք է լինեն գործարարանային արտադրության: • Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և գործարկումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով, համաձայն արտադրողի կողմից խորհուրդ տրվող ճարտարապետության: • Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը: • Հրավերով պահանջվող սարքերի համար մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF): • Արտադրողի կողմից պետք է գործի 5 տարվա գործարանային երաշխիք՝ 24x7 ռեժիմում արտադրողի համակարգում սերվիս-դեպք գրանցելու հնարավորությամբ և առավելագույնը 4-ժամյա հետադարձ կապով: Վնասված կրիչները փոխարինումից հետո չեն վերադարձվելու մատակարարին կամ արտադրողին, ինչը պետք է արձանագրված լինի արտադրողի կողմից ներառվող գործարանային երաշխիքի նկարագրությունում:

Անվանումը		Տեխնիկական բնութագիրը	ՀՀ գնումների մասին օրենսդրության խախտումներ, գնման ընթացակարգի խեղաթյուրումներ, մրցակցության բացառում, մեկ արտադրողին պարունակող չափանիշներ
Չափաբաժին 1			
Կոմպոզիտիվ սերվերներ	Տեսակ	ՀՀ ՊԵԿ-ում առկա HPE Synergy 12000-ում տեղադրելու համար	Սույն հոմամբ արդեն իսկ հիմնավորվում է այն փաստը, որ ներկայացված չափանիշներին համապատասխանում է միայն մեկ արտադրող, ախ է HPE:
	Պրոցեսորների արտադրողականություն	SPEC rate2017 integer result base՝ 223 միավոր	
	Օպերատիվ հիշողություն	Ընդամենը 512ԳԲ՝ 16 միանման DDR4-2933 Dual Rank մոդուլներով	16 քանակի պայմանին բավարարում է միմիայն մեկ արտադրողի ապրանք:

Անվանումը		Տեխնիկական բնութագիրը	ՀՀ գնումների մասին օրենսդրության խախտումներ, գնման ընթացակարգի խեղաթյուրումներ, մրցակցության բացառում, մեկ արտադրողին պարունակող չափանիշներ
Չափաբաժին 2			
Տվյալների պահոցներ	Կոնտրոլերների նկարագրություն	- առնվազն 4 ակտիվ կոնտրոլեր՝ տաք փոխարինման հնարավորությամբ - ընդհանուր 1TIB cache հիշողություն՝ 256GiB յուրաքանչյուր կոնտրոլերի վրա - առնվազն 32 հատ 32Gb Fibre Channel պորտեր -յուրաքանչյուր կոնտրոլերի վրա առնվազն 2 հատ 10Gb Ethernet առանձնացված պորտեր՝ նախատեսված տվյալների ապպարատային ռեպլիկացիայի համար -յուրաքանչյուր կոնտրոլերի	Առնվազն 4 ակտիվ կոնտրոլեր պայմանին համապատասխանում է մեկ արտադրողի ապրանք:
	Տեղադրված սկավառակներ	48x1.92TB SSD SAS 2.5”	
	Համակարգի աճեցման հնարավորություն	սկավառակներ - առնվազն 26 հատ NVMe SSD կրիչներ տեղադրելու հնարավորություն -առնվազն 384 հատ SSD սկավառակներ տեղադրելու հնարավորություն -առնվազն 576 հատ HDD սկավառակներ տեղադրելու հնարավորություն -1.92, 3.84, 7.68, 15.36TB SSD 2.5” սկավառակների աջակցում	Ինչով է պայմանավորված հենց առնվազն 26 հատ չափանիշը, երբ տվյալ պահանջը լիովին համապատասխանում է մեկ արտադրողի ապրանք՝ բացառելով համարժեք տարբերակների գոյությունը:
	Տվյալների ռեպլիկացիա	-Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա միևնույն մոդելի այլ համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման -Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա առկա HPE 3PAR 8400 համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման	HPE 3PAR 8400 ապրանքային նշանի ամրագրմամբ արդեն իսկ հիմնավորվում է մեր կողմից վկայակոչված հանգամանքը, այն է, որ կրկին անգամ մրցակցության սահմանափակմամբ մեկ արտադրողի ապրանքին համապատասխան չափանիշներ են ամրագրվել և դրանով իսկ պարզապես բացառել համարժեք ապրանքի ներկայացման հնարավորությունը շուկայի մյուս մասնակիցների համար:

9. Տեխնիկական բնութագրում նշված 2 չափաբաժներում ներկայացված ապրանքները/հավաքածուն և վերջինիս առաջադրված պայմանները չեն համապատասխանում Գնումների մասին օրենսդրության պահանջին: Ավելին վերևը ներկայացված աղյուսակի համապատասխան սյունակում ներկայացված են այդ անհամապատասխանությունների որոշակի մասը:

10. Տեխնիկական բնութագրում նախատեսվել են նախապայմաններ, չափանիշներ, որոնք սահմանափակում են ազատ մրցակցությունը, անհնարին դարձնում կոնկրետ արտադրողից բացի այլ արտադրողի ապրանքով մասնակցությունը:

11. Հրավերով պահանջվող սարքերի համար մասնակցի կողմից արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF)-ի ներկայացման պահանջով արդեն իսկ սահմանափակվում է մրցակցությունը, քանզի այդպիսի պահանջի

կարող է բավարարվել մեկ մասնակցի կողմից, քանզի մեկ արտադրողի ապրանքի են համապատասխանում ներկայացված չափանիշները:

11. Պատվիրատուի կողմից թույլ է տրվել ՀՀ գնումների օրենսդրության դրույթների խախտում, խեղաթյուրվել է գնման գործընթացը, մասնավորապես խախտվել է ՀՀ-ի համար 05.06.2015թ. ուժի մեջ մտած «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-5-րդ կետերով, Օրենքի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ հոդվածներով, Կարգի 21-րդ, 22-րդ կետերով սահմանված դրույթները:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի, դրան կից ներկայացված տեխնիկական բնութագրում ամրագրված տեխնիկական պայմանները խախտում են Գնումների օրենսդրության համապատասխան դրույթները, մասնավորապես.

«Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-5-րդ կետերի համաձայն.

«Հոդված X Տեխնիկական բնութագրեր և մրցառքի փաստաթղթեր Տեխնիկական բնութագրեր.

1. Պատվիրատուն չպետք է մշակի, ընդունի կամ կիրառի որևէ տեխնիկական բնութագիր կամ սահմանի որևէ համապատասխանության գնահատման ընթացակարգ միջազգային առևտրին անհարկի խոչընդոտներ ստեղծելու նպատակով կամ ազդեցությամբ:

2. Գնվելիք ապրանքների կամ ծառայությունների համար տեխնիկական բնութագրեր սահմանելիս, պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, պետք է.

ա. սահմանի տեխնիկական բնութագրերը կատարողականի և գործառնական պահանջների առումով և ոչ թե ինժեներական կամ նկարագրական հատկանիշների առումով, և բ. հիմնվի տեխնիկական բնութագրերի միջազգային չափանիշների վրա, եթե այդպիսիք կան, հակառակ դեպքում ազգային տեխնիկական կանոնակարգերի, ընդունված ազգային չափորոշիչների կամ շինարարական նորմերի վրա:

3. Եթե տեխնիկական բնութագրերում օգտագործվում են ինժեներական կամ նկարագրական հատկանիշներ, պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, պետք է նշի, որ նա կդիտարկի համարժեք ապրանքների կամ ծառայությունների մրցութային առաջարկները, որոնք ակնհայտորեն բավարարում են գնման պահանջներին ներառելով մրցառքի փաստաթղթերում այնպիսի բառեր, ինչպես՝ «կամ համարժեք» բառերը:

4. Պատվիրատուն չպետք է սահմանի այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք պահանջում կամ հղում են տալիս որոշակի ապրանքային նշանին կամ առևտրային

անվանմանը, արտոնագրին, հեղինակային իրավունքին, դիզայնին, տեսակին, հատուկ ծագմանը, արտադրողին կամ մատակարարին, եթե միայն չկա մեկ այլ բավարար չափով ճշգրիտ կամ դյուրըմբռնելի մեթոդ գնման պահանջները նկարագրելու համար և պայմանով, որ նման դեպքերում, կազմակերպությունը ներառում է «կամ համարժեք» բառերը մրցառքի փաստաթղթերում:

5. Ցանկացած տեխնիկական բնութագրի մշակման կամ ընդունման ժամանակ պատվիրատուն չպետք է փնտրի կամ ընդունի, այնպիսի եղանակով, որը կարող է մրցակցությանը խոչընդոտող ազդեցություն ունենալ, խորհուրդ այնպիսի անձից, որը կարող է առևտրային շահ ունենալ գնումներում»:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև նաև Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային

անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ ապրանքի ամբողջական նկարագիր),

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն . Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում.

Կարգի 22-րդ կետի համաձայն գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Աղյուսակ 1-ում ներկայացված «ՀՀ գնումների մասին օրենսդրության խախտումներ, գնման ընթացակարգի խեղաթյուրումներ, մրցակցության բացառում, մեկ արտադրողին պարունակող չափանիշներ» սյունակում հստակ ամրագրված են այն պայմանները, որոնցից ակնհայտ է, որ հրապարակված ձևաչափով տեխնիկական բնութագիրը չի բավարարում մեկից ավելի հնարավոր արտադրողի չափանիշը:

Վկայակոչված թիվ 1 աղյուսակում ներկայացված և ընդգծված համապատասխան պայմաններում ներկայացված չափանիշները հակասում են Օրենքին և Կարգին, մասնավորապես.

- *կոնտրոլերների նկարագրություն- առնվազն 4 ակտիվ կոնտրոլեր տաք փոխարինման հնարավորությամբ= Սույն պայմանին նույնպես բավարարում է մեկ*

արտադրող, որով իսկ խախտվում է Օրենքը և Կարգը: Այդ մասին է վկայում նաև DELL-ի գրությունը: Հաշվի առնելով վկայակոչվածը առաջարկում ենք տեխնիկական բնութագրի նշված պայմանը փոփոխել և առնվազն 4-ի փոխարեն սահմանել առնվազն 2-ը:

- *համակարգի աճեցման հնարավորություն - առնվազն 26 հատ NVMe SSD կրիչներ տեղադրելու հնարավորություն- Սույն պայմանին նույնպես բավարարում է մեկ արտադրող, որով իսկ խախտվում է Օրենքը և Կարգը: Այդ մասին է վկայում նաև DELL-ի գրությունը: Հաշվի առնելով վկայակոչվածը առաջարկում ենք տեխնիկական բնութագրի նշված պայմանը փոփոխել և առնվազն 26-ի փոխարեն սահմանել առնվազն 21-ը:*
- *տվյալների ռեպլիկացիա- Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա միևնույն մոդելի այլ համակարգի հետ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման, տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա առկա HPE 3PAR 8400 համակարգի հետ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման- Սույն պայմանին նույնպես բավարարում է մեկ արտադրող, որով իսկ խախտվում է Օրենքը և Կարգը: Այդ մասին է վկայում նաև DELL-ի գրությունը: Հաշվի առնելով վկայակոչվածը առաջարկում ենք տեխնիկական բնութագրի նշված պայմանը փոփոխել և սահմանել այնպես, որ հնարավորություն ընձեռնվի ընդլայնելու մասնակիցների շրջանակը:*
- *2 չափաբաժնի առանձնացնելը- «Տվյալների պահոցի» և «կոմպոզիտիվ սերվերներ»- ներքո արհեստականորեն խմբավորվել են այլ մասերը, որոնք պետք է առանձնացվեին որպես առանձին չափաբաժիններ ապահովելով հավասար հնարավորություններ այլ մասնակիցների մասնակցության համար, այն պարագայում, երբ երկու չափաբաժնի ներքո այդ մասերը խմբավորելով կրկին անգամ փորձ է արվում մեկ արտադրողի ապրանքի ձեռք բերման ուղղված գնման գործընթացի:*

Նշված տեխնիկական բնութագրում ներկայացված և մեր կողմից չընդգծված պայմաններում նույնպես առկա են այնպիսի չափանիշներ, որոնց արդյունքում սահմանափակվում է գնումներին այլ մասնակիցների մասնակցության իրավունքը: Վկայակոչված հանգամանքից ելնելով, բողոքի քննության ժամանակ Պատվիրատուի կողմից պետք է հիմնավորվեն նաև մյուս պայմանների մեկից ավելի արտադրողի ապրանքի համապատասխանության հանգամանքը:

Վկայակոչված փաստերից և թիվ 1 աղյուսակում ներկայացված խախտումներից ելնելով ակնհայտ է, որ տեխնիկական բնութագրում ներկայացված չափանիշների մեծամասնությունը համապատասխանում են միմիայն մեկ արտադրողի, բացառված է այլ երկրորդ արտադրողի կողմից համարժեք ապրանքի առկայություն: Այն պարագայում, երբ

գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավասության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը: Ավելին, վերոնշյալ սկզբունքների ապահովումն և իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրականացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Ավելին, ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները բացառելով տարաբնույթ մեկնաբանման հնարավորությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, ինչպես նաև գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող սույն գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին, և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը, այլ կերպ ասած բնութագիրն պետք է օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման համար հայտարարվել է ընթացակարգը:

Ընկերության կողմից սույն բողոքի շրջանակում տեխնիկական բնութագրում առկա խախտումների վերաբերյալ համապատասխան գրություն, արտատպումներ ներկայացվել են, սակայն ցանկանում ենք հավելել, որ տվյալ պարագայում Պատվիրատուն է կրում բողոքում ներկայացված հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքի ժխտման/հերքման բեռը, քանզի Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրեր սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավականացնի մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Այսպիսով, Պատվիրատուն պետք է հիմնավորի, որի իր կողմից հաստատված և հրապարակված տեխնիկական բնութագրում առկա չեն խախտումներ Օրենքի և Կարգի:

Այսպիսով, Պատվիրատուի կողմից երկու չափաբաժնում խմբավորելով տարբեր, առանձին տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաներ, արհեստականորեն

սահմանափակել է հնարավոր մասնակիցների շրջանակը և նրանց միջև մրցակցության հնարավորությունը, որի արդյունքում Պատվիրատուն խախտել է Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախտման, որոնք գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից են:

Ուստի գտնում ենք, որ երկու չափաբաժնում որպես գնման առարկա խմբավորված ապրանքատեսակները տարանջատել առանձին չափաբաժինների, որպիսի պայմաններում ընթացակարգի մասնակիցների շրջանակը կընդլայնվի, ինչն էլ իր հերթին կհանգեցնի մրցակցության ապահովմանը:

Վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից և ներկայացված ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովի կողմից պետք է փոփոխություններ կատարվեն տեխնիկական պայմաններում, որպեսզի է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ կազմված հրավերն և տեխնիկական բնութագիրը ապահովեն մրցակցության առողջ մթնոլորտ և Գնումների օրենսդրության դրույթներին համապատասխան գնումների գործընթաց: Ավելացնենք, որ Օրենքի 13-րդ հոդվածի խախտումն իր հերթին հանգեցնելու է Օրենքի 3-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներում ամրագրված դրույթների խախտմանը, մասնավորապես մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, մասնակիցներին զրկում է երաշխավորված գնման գործընթացի մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունից, խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին և այլն: Այսպիսով, գտնում ենք, որ վերոնշված բողոքում ներկայացված փոփոխությունների կատարման արդյունքում Ընթացակարգի մասնակիցների շրջանակը կընդլայնվի, ինչը կհանգեցնի մրցակցության ապահովմանը:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնահատող հանձնաժողովին՝

1. «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով ընթացակարգի հրապարակված հրավերում և դրան կից տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ բողոքով նշված հիմնավորումների և վերլուծությունների շրջանակում կամ վերացնել սույն բողոքում նշված թերությունները, կամ

2. Չկայացած հայտարարել «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով հայտարարված ընթացակարգը:

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն 28.09.2021թ.-ի ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի սեպտեմբերի 8-ին մեր կողմից ներկայացվել է բողոք ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարության և հրավերի առնչությամբ:

Պատվիրատուի կողմից ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 գնման ընթացակարգի ընթացքում պարզապես իրենց մոտ առկա HPE համակարգի արդիականացման համար էլեկտրոնային աճուրդի միջոցով փորձ է արվում ձեռք բերել տվյալների պահոց և սերվեր, որոնց տեխնիկական բնութագիրը լիովին համապատասխանում է իրենց մոտ առկա արդեն իսկ HPE համակարգին:

Չնայած վկայակոչված ընթացակարգի տեխնիկական բնութագրերում օգտագործվել է «համարժեք» արտահայտությունը, սակայն մենք պնդում ենք, որ դա կրում է արհեստական բնույթ և որևէ կերպ չի ապահովում համարժեք այլ արտադրողի արտադրանքի ներկայացման հնարավորություն այդ չափանիշներին համապատասխան, քանզի տեխնիկական բնութագրերը կրկին անգամ գրված են HPE արտադրանքի համար:

Մեր կողմից բողոքի քննության ընթացքում բարձրացվեց հարց, որ Պատվիրատուի կողմից ներկայացվեն գրավոր փաստարկներ կամ ապացույցներ այն մասին, որ բացի HPE-ից մեկ այլ արտադրողի ապրանք նույնպես համապատասխանում է այս բնութագրերին: Սակայն վերջինիս ներկայացուցիչների կողմից պարզապես արվեց վերացական արտահայտություն այն մասին, որ միգուցե աշխարհի մի մասում արդեն իսկ ստեղծել են այդ բնութագրերին համապատասխան արտադրանք: Սակայն Պատվիրատուն ակնհայտորեն անտեսում է այն հանգամանքը, որ գնումների գործընթացներ կազմակերպելիս վերջինիս կողմից պետք է կատարվի շուկայի ուսումնասիրություն, որի արդյունքում ոչ միայն ակնհայտ կդառնար, որ առկա չէ տվյալ բնութագրերով երկրորդ այլ արտադրող ընկերություն:

Ուստի մենք գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից որևէ կերպ չի ապացուցվել այն փաստարկը, որ իրենց կողմից կազմակերպված գնման գործընթացում պահպանվել են Գնումների մասին օրենսդրության պահանջները, այլ ամեն անգամ փորձ է արվում խուսափել ապացույցներ ներկայացնելու տվյալ տեխնիկական բնութագրերը մեկ արտադրողի ներքո գրված չլինելու հանգամանքի վերաբերյալ համապատասխան ապացույցներ այն պարագայում, երբ սույն բողոքի քննության գործընթացում այդ

փաստարկի հիմնավորման պարտականությունը կրում է Պատվիրատուն: Սույն հանգամանքը պայմանավորված է այն հիմքով, որ նման տեխնիկական բնութագրեր գրելիս արդեն իսկ Պատվիրատուի կողմից պետք է կատարվեին համապատասխան ուսումնասիրություններ և ուսումնասիրվեր նաև մի քանի արտադրողների առկայության փաստը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 բողոքի քննության ընթացքում Պատվիրատուն ստանձնեց ներկայացնել բողոքարկվող գնման ընթացակարգում իր կողմից նշված HPE ընկերության պաշտոնական ներկայացուցիչներ հանդիսացող բոլոր ընկերությունների կողմից MAF ներկայացնելու հնարավորությունը:

Սակայն, պատվիրատուի կողմից ներկայացված մի շարք ընկերությունների գրություններում որևէ կերպ արտացոլված չէ մեր կողմից առաջ քաշված հարցի վերաբերյալ փաստեր, այլ պարզապես վերացական ամրագրում է ստացել մի հանգամանք, որ գնումների գործընթացին մասնակցելիս իրենք կարող են ներկայացնել այլ MAF: Հատկանշական է, որ նմանաբովանդակ պատասխանը որևէ կերպ վերաբերելի չէ այս գնման գործընթացին, քանզի չի պարունակում նույնականացնող որևէ տվյալներ, որ այդ վերաբերվում էր մեր կողմից բողոքարկվող գործընթացին, իսկ մենք հենց բողոքի քննության ընթացքում հստակ նշել էինք, որ ներկայացվեն հիմնավորումներ HPE ներկայացուցիչներից այն մասին, թե արդյոք բոլորը միաժամանակ մասնակցելով մի գնման գործընթացի կարող են ներկայացնել MAF թե ոչ:

Այս հարցը այդպես էլ չի հիմնավորվել և մնացել է անպատասխան Պատվիրատուի կողմից փորձելով շրջացնել ըստ էության մեր կողմից առաջ քաշված հարցին անդրադառնալ ընդհանրական գրություններ ներկայացնելով:

Ավելացնենք, որ Պատվիրատուի կողմից փորձ է արվել իր գրավոր պատասխանում ներկայացված դատական պրակտիկայի փաստերի խեղաթյուրմամբ հիմնավորել իրենց կողմից մեկ արտադրողի ապրանքին համապատասխան տեխնիկական բնութագրեր ներկայացնելը, այն դեպքում, երբ այդ դատական պրակտիկայում որևէ նշում կամ հղում չկա մեկ արտադրողի համապատասխան տեխնիկական բնութագրերը իրավաչափ համարելու վերաբերյալ, այլ բոլոր վկայակոչված դատական գործերում դատարանի կողմից արտահայտած վերլուծություններում հստակ ամրագրված է, որ պետք է ապահովվի համարժեք այլ արտադրանքի կամ ապրանքի ներկայացման հնարավորությունը, որը բողոքարկվող գնման պարագայում բացակայում է: Պատվիրատուի ներկայացուցիչների կողմից սխալ մեկնաբանության է ենթարկվել և ենթարկվում Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև նաև Կարգ) 22-րդ կետը, որի համաձայն գնման

առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 22-րդ կետում հստակ ամրագրված է «բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ» արտահայտությունը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ ոքենքի 16-րդ հոդվածում հստակ ամրագրված է նորմատիվ իրավական ակտում որոշ շաղկապների և բառերի կիրառումը, մասնավորապես սույն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված է եթե նորմաաիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա չի կարող կիրառվել «ե» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել սառրակևաով կամ կետադրական այլ նշանով: Ավելին, վկայակոչված օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետում հստակ արձանագրված է, որ եթե նորմաաիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է առորակետերով կամ «Ь> կամ «ու», ինչպես նաև «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա սսարակեսւերով կամ «ե» կամ «ու» շաղկապներով բաժանված պայմանների մասով այդ նորմի կիրառման համար անհրաժեշտ է բոլոր պայմանների առկայությունը, իսկ «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

Այսպիսով Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագիրը գրելիս ոչ միայն պետք է հաշվի առնվեր մեկից ավելի հնարավոր մասնակիցների հանգամանքը, այլ նաև մեկից ավելի արտադրողների առկայության հանգամանքը, քանզի Կարգում հստակ ամրագրված է, որ այդ երկու պայմանների առկայությունը պարտադիր է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից արդեն իսկ երկրորդ անգամ է փորձ արվում Գնումների մասին օրենսդրության կարևորագույն և մրցակցություն ապահավող դրույթների խախտմամբ իրականացնել գնում, գտնում ենք, որ անհրաժեշտություն է առաջանում այս գործընթացին նաև ներգրավել Պետական վերահսկողական ծառայությունից ներկայացուցիչ, որպեսզի վերջիններիս կողմից նույնպես ուսումնասիրվի կազմակերպված գնման գործընթացի իրավաչափության հարցը:

Այսպիսով, գտնում ենք, որ մեր բողոքում և դիրքորոշումում ներկայացված փաստարկներից ակնհայտ է, որ մեր ներկայացված բողոքը չունի ինքնանպատակ, խախտվել է տվյալ գնման գործընթացով ՀՀ գնումների օրենսդրության դրույթները, խեղաթյուրվել է գնման գործընթացը, մասնավորապես խախտվել է ՀՀ-ի համար 05.06.2015թ. ուժի մեջ մտած «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրի

10-րդ հոդվածի 1-5-րդ կետերով, Օրենքի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ, 25-րդ հոդվածներով, Կարգի 21-րդ, 22-րդ կետերով սահմանված պահանջները և միջնորդում ենք սույն բողոքի քննարկումներին կամ լսումներին, նիստերին ներգրավել նաև Պետական վերահսկողական ծառայության իրավասու անձի կամ անձանց:»:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/14544-2021 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից 08.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն, ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 13.09.2021թ.-ին թիվ 1/06/57520-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «Ստեպ Լոջիկ Յուգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից թիվ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքը և գործի փաստական հանգամանքները, վերջիններս համադրելով կիրառման ենթակա իրավական նորմերի հետ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն գտնում է՝ բողոքն ամբողջությամբ առարկայազուրկ է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Նախևառաջ պետք է նկատել, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բողոքում քննարկման առարկա է դարձել «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը և գնման առարկաների տեխնիկական բնութագրերը, այլ կերպ՝ պայմանագրի առարկան:

Պայմանագրի առարկան (գնման առարկան) պետության կարիքի բավարարման նպատակով ձեռք բերվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունն է, իսկ գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշների, դրանց ձեռքբերման և վճարման պայմանների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:

Գնման առարկայի բնութագիրը մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների ապահովման գործիքներից է, որը հնարավորություն է տալիս ի սկզբանե պատկերացում կազմելու պայմանագրի առարկայի մասին: Գնման հայտում ներառված գնման առարկայի բնութագրերի թերի կազմելու հետևանքով հաճախ խոչընդոտվում է մրցակցության հավասար պայմանների սկզբունքի իրականացումը, որը միևնույն ժամանակ պատճառ է դառնում գնման ընթացակարգը չեղյալ հայտարարելու կամ մասնակիցներից նվազագույն գին առաջարկած մասնակցին պարզապես հաղթող ճանաչելու, ինչը որոշակի ռիսկ է պարունակում՝ նկատի ունենալով, որ պատվիրատուն ստիպված է կնքել պայմանագիր հաղթող մասնակցի հետ՝ ձեռք բերելով ապրանք, որը չի բավարարում իրեն իրականում անհրաժեշտ պայմաններին:

Նման խնդրի իրական պատճառն այն է, որ պատվիրատուն թերի է ներկայացնում գնման առարկայի բնութագիրը, ինչի պատճառով նմանատիպ համարվող, սակայն պատվիրատուին անհրաժեշտ գնման առարկայի իրական բնութագրին չհամապատասխանող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք է բերվում ցածր գնով, ինչը դեռ չի նշանակում, որ տվյալ գնման առարկան համապատասխանում է անհրաժեշտ կարիքին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն էլեկտրոնային աճուրդի հայտարարություն է հրապարակել իրեն իրականում անհրաժեշտ և արդեն իսկ ունեցած ապրանքների հետ առավելագույնս համատեղելի վավերապայմաններին բավարարող գնման առարկայի բնութագիր: Ավելի քան ակնհայտ է՝ թերի տեխնիկական բնութագրով կազմված գնման առարկայի ձեռքբերման հետևանքով խնայողությունը պատճառ է դառնում հետագայում լրացուցիչ ծախսերի և ֆինանսական չարաշահումների: Հետևաբար՝ գնման առարկայի բնութագրերը կազմելիս անհրաժեշտ է խստորեն հետևել օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ նկատի ունենալով, որ հենց գնման առարկայի բնութագրի մեջ է արտացոլվում պայմանագրի կամ, այլ կերպ՝ տվյալ գնման հիմք հանդիսացող պետական կարիքը: Նույնանման դիրքորոշում է արտահայտել նաև ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԱՔԴ/0226/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված հատկանիշների տարբեր կերպ մեկնաբանման և ընկալման վերաբերյալ:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում անդրադարձ կատարել ներկայացված բողոքի՝ «Բողոքի փաստական հիմքերը» բաժնի հետևյալ կետերին.

Կետ 4. - Գտնում ենք, որ կոմպոզիտիվ սերվերների և պահոցների ձեռքբերումն ինքնին հանդիսանում է առկա սերվերային համակարգի արդիականացում:

Կետ 5 և Կետ 6. - Գտնում ենք, որ Հրավերի թիվ 5 հավելվածում ներկայացված պայմանագրի նախագծում տրված են նկարագրեր, որոնք հնարավորություն են տալիս մասնակիցներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Ինչ վերաբերում է պահանջների խմբավորմանը, ապա այն հետապնդում է ճշգրիտ ընկալելու հնարավորության ընձեռնման նպատակ:

Կետ 8. - Բողոքի «Չափաբաժին 1» աղյուսակի «ՀՀ Գնումների մասին օրենսդրության խախտումներ, գնման ընթացակարգի խեղաթյուրումներ, մրցակցության բացառում, մեկ արտադրողին պարունակող չափանիշներ» սյունակում շարադրված դիտողությունների վերաբերյալ տրվում են հետևյալ պատասխանները.

Դիտողություն - «Սույն հղմամբ արդեն իսկ հիմնավորվում է այն փաստը, որ ներկայացված չափանիշներին համապատասխանում է միայն մեկ արտադրող, այն է՝ HPE»:

Պատասխան - Պահանջը պայմանավորված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեում արդեն իսկ գործող սարքավորումների առկայությամբ:

Դիտողություն - «16 քանակի պայմանին բավարարում է միմիայն մեկ արտադրողի ապրանք»:

Պատասխան - Պահանջվող քանակը պայմանավորված է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործառույթների անխափան իրականացումն ապահովելու նպատակով:

Բացի այդ՝ բողոքի «Չափաբաժին 2» աղյուսակի «ՀՀ Գնումների մասին օրենսդրությանն խախտումներ, գնման ընթացակարգի խեղաթյուրումներ, մրցակցության բացառում, մեկ արտադրողին պարունակող չափանիշներ» սյունակում շարադրված դիտողությունների վերաբերյալ տրվում են հետևյալ պատասխանները.

Դիտողություն - «Առնվազն 4 ակտիվ կոնտրոլեր պայմանին համապատասխանում է մեր արտադրողի ապրանք»:

Պատասխան - Կոնտրոլերների նկարագրության մասով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում տարիներ շարունակ գործում են թե՛ 2 և թե՛ 4 ակտիվ նոդերով տվյալների պահոցներ: Կոմիտեի տարիների փորձը ցույց է տվել, որ 2 նոդով աշխատող պահոցները խիստ ծանրաբեռնվում են հատկապես այն պայմաններում, երբ նոդերից մեկը շարքից դուրս է գալիս, ինչը բազմիցս տեղի է ունեցել: Նմանատիպ վթարներից մեկը՝ մեկ ակտիվ նոդի շարքից դուրս գալը, տեղի է ունեցել սույն թվականի օգոստոսին, որի հետևանքով մի քանի օրվա ընթացքում պարալիզացվել է Կոմիտեի ամբողջ համակարգի աշխատանքը: Այս խնդիրը չի նկատվել 4 նոդով աշխատող պահոցների դեպքում: Ուստի՝ հաշվի առնելով պահպանվող տեղեկատվության կարևորությունը և համակարգերի անխափան աշխատանքը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համար պարտադիր պայման է առնվազն 4 ակտիվ նոդերի առկայությունը:

Իսկ այն պնդումը, որ «4 ակտիվ կոնտրոլեր պայմանին համապատասխանում է մեկ արտադրողի ապրանք» ևս իրենից ներկայացնում է չապացուցված հայտարարություն:

Դիտողություն - «Ինչով է պայմանավորված հենց առնվազն 26 հատ չափանիշը, երբ տվյալ պահանջին լիովին համապատասխանում է մեկ արտադրողի ապրանք՝ բացառելով համարժեք տարբերակների գոյությունը»:

Պատասխան - Համակարգի աճեցման հնարավորության վերաբերյալ՝ տեխնիկական բնութագրով պահանջվող տվյալների պահոցը պետք է ունենա հնարավորություն հետագա պահանջի դեպքում HDD և SSD կրիչները փոխարինել NVMe SSD կրիչներով: Հաշվի առնելով առկա և շարունակական հավաքագրվող տվյալների ծավալները, ինչպես նաև ներկայումս գոյություն ունեցող առավելագույն NVMe 15,36 ՏԲ ծավալը՝ հաշվարկվել է առնվազն 26 պահանջարկ:

Այսպիսով, բողոքաբերի պնդումն առ այն, որ «տվյալ պահանջին լիովին համապատասխանում է մեկ արտադրողի ապրանք» նույնպես չապացուցված հայտարարություն է:

Դիտողություն - «HPE 3PAR 8400 ապրանքային նշանի ամրագրմամբ արդեն իսկ հիմնավորվում է մեր կողմից վկայակոչված հանգամանքը, այն է՝ կրկին անգամ մրցակցության սահմանափակմամբ մեկ արտադրողի ապրանքին համապատասխան չափանիշներ են ամրագրվել և դրանով իսկ պարզապես բացառել համարժեք ապրանքի ներկայացման հնարավորությունը շուկայի մյուս մասնակիցների համար»:

Պատասխան - Տվյալների ռեպլիկացիայի վերաբերյալ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում արդեն իսկ առկա է «x» հատ HPE 3PAR 7200, «x» հատ HPE 3PAR 8200, «x» հատ HPE 3 PAR 8400 ապրանքանիշի տվյալների պահոցներ, որոնք գտնվում են և պետք է գտնվեն շահագործման մեջ, ուստի՝ տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիան նշված ապրանքանիշերի տվյալների պահոցների հետ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման խիստ անհրաժեշտություն է:

Տեխնիկական բնութագրում նշված ապրանքանիշը տրված է միայն համատեղելիությունը, սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիայի գործընթացը ապահովելու նպատակով և տակավին չի նշանակում, որ պահանջվում է հենց այդ ապրանքանիշի սարք:

Ինչ վերաբերում է բողոքաբերի «միմիայն մեկ արտադրողի ապրանք» պնդմանն, ապա այն իրենից ներկայացնում է չապացուցված հայտարարություն:

Կետ 11. - (MAF – Manufacturer՝s Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF – Distributor Authorization Form) պահանջը նշելու վերաբերյալ Կոմիտեն պաշտոնապես դիմել է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (18.08.2020 թվականի թիվ 1/6-7/53394-2020 գրություն): Ստացվել է պատասխան առ այն, որ նշումը չի հակասում մրցակցության օրենսդրությանը:

Բողոքով տրված (Bullets նշաններով) առաջարկությունների վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Կոնտրոլերների քանակի կրճատման (4-ից 2), կրիչների քանակի կրճատման (26-ից 21), HPE 3PAR 8400 մակնիշի սարքավորման հետ սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիայի պահանջը հանելու և 2 չափաբաժինների պահանջները վերախմբավորելու առաջարկությունները համարվում են անընդունելի, ինչն արդեն իսկ հիմնավորվել է վերոգրյալ 6-րդ և 8-րդ կետերի պատասխաններում:

Միաժամանակ գտնում ենք, որ մեկ կազմակերպության (DELL) գրությունը չի կարող ապացույց հանդիսանալ այն փաստի, որ համաշխարհային շուկայում չկա անհրաժեշտ չափանիշներով սարքավորումների այլ արտադրողներ:

Այդուհանդերձ առարկայական ենք համարում վկայակոչել թիվ ԵԿԴ/0309/02/12 քաղաքացիական գործը, որի շրջանակներում հայցվոր ընկերությունը դիմել է դատարան՝ վիճարկելով գնահատող հանձնաժողովի որոշումը՝ մեկ այլ ընկերությանը հաղթող ճանաչելու մասին: Հայցի հիմքում դրված փաստական հանգամանքներից մեկն էլ եղել է այն, որ պատվիրատուն գնման ընթացակարգի հրավերում հստակ նշել է գնման առարկայի կոնկրետ արտադրողի անվանումը և մոդելը՝ «թվային պրոյեկտոր Mitsubishi EX240U»: Հայցվորի կարծիքով՝ նման ձևակերպումը ոչ միայն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին, այլ նաև պատվիրատուն զրկված չէր գնման առարկայի հատկանիշներն առանց կոնկրետ մոդելի հղում անելու ներկայացնելուց՝ թեկուզ և նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինտերնետային աղբյուրների միջոցով միանշանակ հնարավոր էր ստանալ վերոնշյալ մոդելի հատկանիշները: Նշված հայցին ի պատասխան՝ պատվիրատուն նշել է, որ տեխնիկական բնութագրում օգտագործվել է «կամ համարժեք» արտահայտությունը, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի խախտվել: Բացի այդ՝ նշել է, որ «Պրակտիկայում, որպես կանոն, ելնելով գնման գործընթացի արդյունավետ և օգտավետ կազմակերպման՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով ամրագրված նպատակից, հիմք ընդունելով շուկայում առկա անորակ ապրանքների քանակի ներհոսքը և խուսափելու համար հետագայում ծագող խնդիրներից և լրացուցիչ ծախսերից՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնման դեպքում հրավերում հղում է կատարվում կոնկրետ ֆիրմային անվանմանը, մոդելին և այլն: Նշված դեպքում պատասխանողի գնահատող հանձնաժողովի նախօրոք կատարված ուսումնասիրությունների արդյունքով շուկայում առաջատարներից (բարձր որակ և այլն) է համարվել «Mitsubishi EX 240U» պրոյեկտորը, որպիսի ապրանքի գնման ընթացակարգ է կազմակերպվել»: Սույն գործով առաջին ատյանի դատարանը որոշել է, որ հայցվորը չի ապացուցել իր կողմից վկայակոչված այն փաստը, որ գնման առարկան կարող էր բնութագրվել առանց ֆիրմային անվանմանը և մոդելին հղում տալու և հայցը մերժելու: Դեռ ավելին՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հավելել է, որ գնման առարկայի հատկանիշների բնութագրումը թույլատրվում է, եթե անհնարին է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Այսինքն՝ անհնարինությունը պետք է առաջանա պատվիրատուի կողմից, և ինքն է գնահատում «անհնարինության» առկայության կամ բացակայության հանգամանքը՝ ելնելով կոնկրետ ապրանքի և դրան ներկայացվող

որակական չափանիշներից: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է՝ վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոշարադրյալ իրավական և փաստական հանգամանքների համակարգային վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ Կոմիտեի կողմից չի խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի որևէ պայման՝ հաշվի առնելով, որ գնման առարկան բնութագրվել է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ամբողջությամբ և հստակ, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեում առկա գործող համակարգերը: Այն մրցակցության հավասար պայմաններ է ապահովում հնարավոր մասնակիցների համար, չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների և օբյեկտիվորեն հիմնավորված ու համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի նախատեսում է.

«1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

2. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:»:

Այսպիսով օրենսդիրը նախատեսել է կասեցման ընդհանուր կանոն գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքի դեպքում: Միևնույն ժամանակ սահմանվել է ընդհանուր կանոնից բացառություն առ այն, որ հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով՝ կարող է հանվել կիրառված կասեցումը: Հիմք ընդունելով էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ սույն պարագայում առկա է հանրային գերակա շահ՝ անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը՝ առաջնորդվելով հարկային մարմնում պահպանվող տեղեկատվության կարևորությամբ, շարունակական հավաքագրվող տվյալների ծավալներով և համակարգերի անխափան աշխատանքի անհրաժեշտությամբ, քանի որ գնման գործընթացի կասեցման դեպքում առկա է Կոմիտեի ամբողջ համակարգի աշխատանքի պարալիզացման վտանգ: Ավելի քան ակնհայտ է՝

կասեցման ընդհանուր կանոնից բացառությունները նախատեսված են հենց նման դեպքերի համար

Բացի այդ՝ իրականացվող գնման կարևորությունն ընդգծելու համար առարկայական ենք համարում ուշադրության առարկա դարձնել նաև հետևյալը.

ՀՀ ՊԵԿ հարկային բոլոր էլեկտրոնային կառավարման համակարգերը («E-invoicing», «File-online», «Հարկատու 3» և «ՀԴՄ տվյալներ») և համապատասխան տվյալների շտեմարաններն աշխատում են 24/7 ռեժիմով: Այս համակարգերի անգամ նվազագույն ժամանակահատվածով անհասանելիությունը մեծ խնդիրներ կարող է ստեղծել բոլոր հարկ վճարողների համար:

Համակարգերի խափանումը լրջագույն խնդիրներ կարող է ստեղծել երկրի տնտեսական անվտանգության համար:

Սկսած 2014 թվականից նշված համակարգերը ակտիվ աշխատել են, մասնավորապես՝ 2020 թվականի ընթացքում այդ համակարգերի աշխատանքի արդյունքում տպվել են ավելի քան 455 միլիոն ՀԴՄ կտրոններ, «E-invoicing» համակարգում դուրս են գրվել ավելի քան 27 միլիոն հաշվարկային փաստաթղթեր, «File-online» համակարգով ներկայացվել են շուրջ 3 միլիոն հարկային հաշվարկներ և հաշվետվություններ: Համեմատության համար նշենք, որ օրինակ 2018 թվականին ՀԴՄ կտրոնների թիվը կազմել է 325 միլիոն, այսինքն՝ 2020թվականի աճը 2018 թվականի նկատմամբ կազմել է շուրջ 40%: Ընդհանուր առմամբ համակարգի ծանրաբեռնվածությունը յուրաքանչյուր տարի աճել է առնվազն 20-30%, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետների նախօրեին համակարգը գործում է հնարավորությունների սահմանին, երբեմն նաև կարճաժամկետ խափանումներով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հրատապ պահանջ է դարձել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առկա սերվերային տնտեսության զարգացումը և արդիականացումը:

Նշված միջոցառումն ամրագրված է ՀՀ կառավարության 12.12.2019 թվականի «Հայաստանի հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1830-Լ որոշումով՝ որպես առանձին ռազմավարական խնդիր:

Նշված ռազմավարական խնդիրը նախատեսվում է լուծել նոր ժամանակակից սերվերային համակարգի (իր ամբողջ լրակազմով) ձեռքբերման միջոցով, որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- *կոմպոզիտիվ սերվերներ*

- *տվյալների պահպանման ենթահամակարգ:*

Արդիականացման արդյունքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն կունենա էլեկտրոնային համակարգերի անխափան աշխատանք, հարկային եկամուտների ապահովման լիարժեք հնարավորություն և տնտեսական անվտանգության ռիսկերի նվազագույն աստիճան: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկավոր է իրականացնել անհրաժեշտ սարքավորումների գնման գործընթաց՝ առկա խնդիրների լուծման նպատակով:

Այսպիսով փաստում ենք՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակվել է էլեկտրոնային աճուրդի հայտարարություն հարկային մարմնին իրականում անհրաժեշտ, արդեն իսկ ունեցած ապրանքների հետ առավելագույնս համատեղելի վավերապայմաններին բավարարող գնման առարկայի բնութագիր, որը համապատասխանում է օրենսդրի կողմից վերջինիս համար նախատեսված բոլոր վավերապայմաններին: Արձանագրում ենք՝ առկա չեն բողոքաբերի կողմից վկայակոչված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածների խախտումներ, հետևաբար՝ բողոքն ամբողջությամբ առարկայազուրկ է և ենթակա է մերժման:»:

Պատվիրատուն 24.09.2021թ.-ի թիվ 1/6.1/59648-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ տրամադրում Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպությունների պատասխանները, որոնք վերաբերում են արտադրողի լիազորագրով (MAF – Manufacturer՝s Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագրով (DAF – Distributor՝s Authorization Form) երաշխավորված սարքավորումների մատուցմանը:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցումներն ուղարկվել են Hewlett Packard կազմակերպության պաշտոնական կայքում (հասցե՝ https://findapartner.hpe.com) որպես համագործակցող ներկայացված ընկերություն-ներից 8-ին: Մինչև այս պահը պատասխան է ստացվել 4-ից:

Համագործակցող ընկերությունների պատասխանները տրամադրվում են կից էլեկտրոնային ֆայլերով:»:

Պատվիրատուն 25.09.2021թ.-ի թիվ 1/6.1/60289-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 23.09.2021թ. թիվ 1/6.1/59648-2021 գրության՝ Ձեզ եմ տրամադրում համապատասխան ընկերությունների պատասխան գրությունները՝ արտադրողի լիազորագրով (MAF – Manufacturer՝s Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի

լիազորագրով (DAF – Distributor՝s Authorization Form) երաշխավորված սարքավորումների մատուցման և հետագա մրցույթներին մասնակցելու հնարավորությունների վերաբերյալ:»:

Պատվիրատուն 05.10.2021թ.-ի թիվ 1/61/62448-2021 գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«Ուսումնասիրելով «Ստեպ Լոջիկ Յուգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից թիվ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի քննության ընթացքում ներկայացված դիրքորոշումը և գործի փաստական հանգամանքները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն գտնում է՝ բողոքը և լրացուցիչ ներկայացված դիրքորոշումն ամբողջությամբ առարկայազուրկ են և ենթակա են մերժման:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը ներկայացրել է դիրքորոշում, որն ամբողջությամբ նույնական է բողոքում, ինչպես նաև նիստի ընթացքում արտահայտած դիրքորոշման հետ՝ անհրաժեշտություն չենք տեսնում բողոքի պատասխանով արտահայտած դիրքորոշումը ևս մեկ անգամ ներկայացնել, այնուամենայնից հարկ է արձանագրել հետևյալը.

Բողոքաբերի «մեկ արտադրողի ապրանք» պնդումներն իրենցից ներկայացնում են չապացուցված հայտարարություններ, որոնք ենթակա են ապացուցման վերջինիս կողմից՝ հիմք ընդունելով թիվ ԵԿԴ/0309/02/12 քաղաքացիական գործով Դատարանի արտահայտած դիրքորոշումն ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ, որի բովանդակությունը և վերաբերելիությունը մասնարամասն ներկայացվել է թե՛ բողոքի պատասխանում, թե՛ Կոմիտեի ներկայացուցիչների կողմից նիստի ընթացքում:

Ինչ վերաբերում է (MAF – Manufacturer՝sAuthorizationForm) կամ պաշտոնական մատակարարի լիազորագրին (DAF – Distributor AuthorizationForm), ապա նշվածի վերաբերյալ ևս Բողոքներ քննող անձին է տրամադրվել նման պահանջը նշելու վերաբերյալ Կոմիտեի դիմումն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարությանը (18.08.2020 թվականի թիվ 1/6-7/53387-2020 գրություն) և Տնտեսական մրցակցության պաշտպանություն պետական հանձնաժողովին (18.08.2020 թվականի թիվ 1/6-7/53394-2020 գրություն): Ստացվել է պատասխան առ այն, որ նման նշումը չի հակասում մրցակցության օրենսդրությանը:

Միևնույն ժամանակ առարկայական է մատնանշել, որ Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին են ներկայացվել լրացուցիչ ապացույցներ՝ ի հավաստումն HPE ընկերության պաշտոնական ներկայացուցիչներ հանդիսացող բոլոր ընկերությունների կողմից MAF ներկայացնելու հնարավորության:

Վկայակոչված փաստական հանգամանքներից ուղղակիորեն բխում է՝ Կոմիտեի կողմից չի խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի որևէ պայման՝ հաշվի առնելով, որ գնման առարկան բնութագրվել է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ամբողջությամբ և հստակ, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեում առկա գործող համակարգերը: Այն մրցակցության հավասար պայմաններ է ապահովում հնարավոր մասնակիցների համար, չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների և օբյեկտիվորեն հիմնավորված ու համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Բացի այդ՝ Կոմիտեի կողմից ներկայացվել են վերջինիս գործողությունների իրավաչափությունը հավաստող անհրաժեշտ բոլոր ապացույցները, այնինչ՝ բողոքաբերի կողմից որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց չի ներկայացվել, որպիսի պայմաններում ավելի քան ակնհայտ է՝ բողոքն առնվազն անհիմն է, այն չի պարունակում որևէ իրավական կամ փաստական հանգամանք, որը կարող է հանգեցնել Կոմիտեի կողմից հրապարակված հրավերի ոչ իրավաչափ որակմանը:»:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Ընկերության 28.09.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 29.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15833-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կոմպոզիտիվ սերվերների և տվյալների պահոցների ձեռքբերման նպատակով 26.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ մասնավորապես հայտնելով հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ներկայացված միջնորդության շրջանակներում ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն) փրամադրած փաստաթղթերի վերլուծությամբ հայտնում ենք հետևյալը.

Գնման գործընթացին հնարավոր մասնակիցներից երաշխիքային նամակի և/կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման պահանջի մասով՝ մասնակցության իրավունքի սահմանափակման առնչությամբ հայտնում ենք, որ նման կարգավորում արդեն իսկ առկա է Կառավարության 526-Ն որոշման 21-րդ կետով, ավելին առկա է գրավոր եզրակացություն մրցակցության ոլորտի մարմնից առ այն, որ «պետական գնումների գործընթացով համակարգչային սարքերի ձեռքբերման նպատակով իրականացվող մրցույթների շրջանակներում, արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցի կողմից տրամադրված նամակ-լիազորագրի (MAF-Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագրի (DAF-Distributor Authorization Form) ներկայացման պահանջը մրցութային հայտերում ներառելը չի կարող հակասել մրցակցության օրենսդրությանը, եթե այն ուղղված է ապրանքների ծագման վստահելիություն ապահովմանը»:

Ինչ վերաբերում է նշված գնման առարկաների բնութագրերի՝ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված լինելուն, Ծառայությունը կարծում է, որ բնութագրերը կազմված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան, այն է՝ հստակ նկարագրված են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները, և համաձայն պատվիրատուի ե/կամ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված դիրքորոշման՝ համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է գնումը:

Ինչ վերաբերում է ապրանքի արհեստականորեն «կամ համարժեք» նշված լինելուն, ապա հայտնում ենք, որ Ծառայությունը չունի համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ և չի կարող գնահատել նշվածը: Բողոքաբերը, որպես ապացույց, ներկայացրել է «Դելլ Ուկրաինա» ՍՊԸ-ի (իր գործընկերոջ) կողմից ներկայացված նամակը (ապրանքի համարժեքություն ունենալ-չունենալու վերաբերյալ դիրքորոշումը), որը, կարծում ենք, բավարար հիմք չի կարող հանդիսանալ նման եզրահանգում անելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ Օրենքի նպատակը՝ կարիքին համապատասխան, համարժեք հատուցմամբ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումն է:

Ամփոփելով նշվածը, Ծառայությունը կարծում է, որ Պատվիրատուի գործողություններն օրինաչափ են և բխում են իր հիմնական կարիքի բավարարման անհրաժեշտությունից:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կոմպոզիտիվ սերվերների և տվյալների պահոցների ձեռքբերման նպատակով 26.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Աճուրդ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Ապրանքի			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**Ամբողջական անվանումը**	**Տեխնիկական բնութագիրը**
1	48821100/503	կոմպոզիտիվ սերվերներ	Տեսակ ՀՀ ՊԵԿ–ում առկա HPE Synergy 12000–ում տեղադրելու համար: Պրոցեսորների քանակ Յուրաքանչյուր սերվերի վրա առնվազն երկու հատ: Պրոցեսորի պարամետրեր 2 հատ 20-միջուկանի, 2.1Ghz հաճախականության, 2933MHz հաճախականությամբ DDR4 աջակցմամբ: Պրոցեսորների արտադրողականություն SPEC rate2017 integer result base՝ 223 միավոր: Օպերատիվ հիշողություն Ընդամենը 512ԳԲ՝ 16 միանման DDR4-2933 Dual Rank մոդուլներով: Հիմնական հիշողություն 2 հատ 480ԳԲ 2.5" SSD կրիչ: Ethernet ցանց 1 կոնվերգենտ քարտ 2 Ethernet պորտերով՝ յուրանչյուրը 25/50 Գբիթ/վրկ: Fibre Channel ցանց 1 քարտ 2 Fibre Channel պորտերով՝ յուրանչյուրը 32 Գբիթ/վրկ Այլ պայմաններ. • Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: • Սարքերը և օժանդակ մասերը պետք է լինեն գործարարանային արտադրության: • Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և գործարկումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով, համաձայն արտադրողի կողմից խորհուրդ տրվող ճարտարապետության: • Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը: • Հրավերով պահանջվող սարքերի համար մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF): • Արտադրողի կողմից պետք է գործի 5 տարվա գործարանային երաշխիք՝ 24x7 ռեժիմում արտադրողի համակարգում սերվիս-դեպք գրանցելու հնարավորությամբ և

			առավելագույնը 4-ժամյա հետադարձ կապով: Վնասված կրիչները փոխարինումից հետո չեն վերադարձվելու մատակարարին կամ արտադրողին, ինչը պետք է արձանագրված լինի արտադրողի կողմից ներառվող գործարանային երաշխիքի նկարագրությունում:
2	30232230/501	տվյալների պահոցներ	Կոնտրոլերների նկարագրություն - առնվազն 4 ակտիվ կոնտրոլեր՝ տաք փոխարինման հնարավորությամբ - ընդհանուր 1TiB cache հիշողություն՝ 256GiB յուրաքանչյուր կոնտրոլերի վրա - առնվազն 32 հատ 32Gb Fibre Channel պորտեր - յուրաքանչյուր կոնտրոլերի վրա առնվազն 2 հատ 10Gb Ethernet առանձնացված պորտեր՝ նախատեսված տվյալների ապպարատային ռեպլիկացիայի համար - յուրաքանչյուր կոնտրոլերի վրա առնվազն 4 հատ SAS 12Gb պորտեր՝ նախատեսված սկավառակների դարակների միացման համար: Տեղադրված սկավառակներ 48x1.92TB SSD SAS 2.5" սկավառակներ: Համակարգի աճեցման հնարավորություն - առնվազն 26 հատ NVMe SSD կրիչներ տեղադրելու հնարավորություն - առնվազն 384 հատ SSD սկավառակներ տեղադրելու հնարավորություն - առնվազն 576 հատ HDD սկավառակներ տեղադրելու հնարավորություն - 1.92, 3.84, 7.68, 15.36TB SSD 2.5" սկավառակների աջակցում: Համակարգի ֆունկցիոնալ - ակնթարթային պատճեների ստեղծում (snapshots) - ամբողջական պատճեների ստեղծում (snapclones) - համակարգի կառավարման ծրագրային ապահովում - համակարգի արագագործության վերլուծության ծրագրային ապահովում - նեղ հատորների հետ աշխատելու հնարավորություն (Thin Provisioning) - համակարգը տրամաբանական հատորների բաժանելու հնարավորություն - Oracle, Microsoft Exchange, Microsoft SQL, VMware vSphere, Microsoft Hyper-V ծրագրային փաթեթների համար ակնթարթային կոնսիստենտ պատճեների ստեղծման հնարավորություն - VMware vCenter-ի հետ ինտեգրման հնարավորություն - Տվյալների դեդուպլիկացիա և սեղմում (Compression): Տվյալների ռեպլիկացիա - Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա միևնույն մոդելի այլ համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման - Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա առկա HPE 3PAR 8400 համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման: Համակարգի ադմինիստրավորում Համակարգը պետք է աջակցի "call home" ֆունկցիոնալ, որը թույլ է տալիս՝ - համակարգի խնդիրների դեպքում արտադրողի սերվիսային համակարգում ավտոմատ սերվիս-դեպքի գրանցում - հաշվի առնելով պատվիրատուի մոտ առկա միկրոկոդերի և ծրագրային փաթեթների տարբերակները (version)՝ առկա խորհուրդ տրվող թարմացումների ցանկի ավտոմատ տրամադրում - 10-բալային համակարգով գրել/կարդալու գործողությունների ժամանակ համակարգի արտադրողականության գնահատում: Մալուխներ և փոխարկիչներ Տվյալների պահոցը նաև պետք է ներառի բոլոր կոմպոնենտները արտաքին ենթակառուցվածքներին միանալու համար: Այդ կոմպոնետներն են՝ Ա. Էլեկտրական սնուցման աղբյուրին միացվող մալուխներ բոլոր հոսանքի մուտքերի համար Բ. Փոխարկիչներ տվյալների պահոցների բոլոր օպտիկական պորտերին միանալու համար Գ. Օպտիկական մալուխներ Բ կետում նշված բոլոր փոխարկիչներին միանալու համար Դ. Մալուխներ տվյալների պահոցի բոլոր կոնտրոլերները բոլոր դարակաշարերին միացնելու համար Այլ պայմաններ. • Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: • Սարքերը և օժանդակ մասերը պետք է լինեն գործարարանային արտադրության: • Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և գործարկումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով, համաձայն արտադրողի կողմից խորհուրդ տրվող ճարտարապետության: • Տեխնիկական բնութագրում

			որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը: • Հրավերով պահանջվող սարքերի համար մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF): • Արտադրողի կողմից պետք է գործի 5 տարվա գործարանային երաշխիք՝ 24x7 ռեժիմում արտադրողի համակարգում սերվիս-դեպք գրանցելու հնարավորությամբ և առավելագույնը 4-ժամյա հետադարձ կապով: Վնասված կրիչները փոխարինումից հետո չեն վերադարձվելու մատակարարին կամ արտադրողին, ինչը պետք է արձանագրված լինի արտադրողի կողմից ներառվող գործարանային երաշխիքի նկարագրությունում:

iii. Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպությունների պատասխանների համաձայն՝

1. «Իքս – Արթ» ՍՊ Ընկերությունը մասնակցում է պետության կարիքների համար կազմակերպվող գնման ընթացակարգերին և անհրաժեշտության դեպքում պատրաստ է ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF-Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ “Իքս - Արթ” ՍՊԸ-ն հանդիսանում է “DELL Technologies”, “Nexans Cabling Solutions”, “Zyxel Networks”, “Schneider Electric”, “Hewlett Packard Enterprise”, “Cooler Master”, “Thermaltake Technology”, “Ruckus”, “FortiGate” ընկերությունների բիզնես գործընկեր և կարող է վաճառել այդ ընկերությունների արտադրանքը:

2. «ԼանԱր Սերվիս» ընկերությունը հանդիսանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խոշորագույն ընկերություններից մեկը եվ համագործակցում է ոլորտի արտադրողների եվ պաշտոկանա ներկայացուցիչների հետ ինչպես նաեվ ունի անվանական գորշընկերոջ կոչում ոլորտի խոշորագույն արտադրողների մոտ: Հաստատում եմ, որ մեր ընկերության կողմից մատակարարվող ապրանքների համար անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել եվ/կամ (MAF-Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր եվ7կամ (DAF-Distributer's Authorization Form) լիազորագրեր: Ստորև ներկայացնում եմ ոչ ամբողջական ցանկը ընկերությունների, որոնց հետ ԼանԱր Սերվիս ՍՊԸ-ն պաշտոնապես համագործակցում է ըստ դասակարգման՝

Տեխնիկայի արտադրողներ' Server, Storage systems, Desktop PC, Notebooks, Accessories Monitors, Cabling systems, Connection system, HPE, HPI, Dell EMC, Lenovo, Acer, Asus, Molex, Jabra, Moxa, BenQ, Canon, Xerox, Philips, AOC, Bachman, Fiber trade, D-Link, Mikrotik, Ubiquiti, Broadcom, Cisco, Juniper, APC, FSP, Schneider Electric, ...

3. «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն կարող է մասնակցել պետության կարիքների համար կազմակերպվող գնման ընթացակարգերին և անհրաժեշտության դեպքում ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF- Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form): Ստորև ներկայացնում ենք ընկերությունների ոչ ամբողջական ցանկը, որոնց կողմից ներկայացված ապրանքները կարող ենք առաջարկել պաշտոնապես: Hewlett Packard Enterprise /HPE/, Hewlett Packard Incorporate /HPI/, Dell Technologies, Lenovo, NetApp, APC by Schneider Electric, Legrand, Fortinet, Wacom, Philips, Acer, Canon, Kaspersky Labs, Microsoft, Adobe, Microfocus, PTC, ESET և այլն:

4. «Բի Լայն» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Լնոն Քեսապյանի, հավաստիացնում է, որ կարող է մասնակցել պետության կարիքների համար կազմակերպվող գնման ընթացակարգերին և անհրաժեշտության դեպքում ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF- Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form): «Բի Լայն» ՍՊԸ-ն հանդիսանում է HP Enterprise ընկերության գործընկեր (Platinum Partner) և արտոնագրված Սերվիս Կենտրոն, HP Inc. ընկեյության գործընկեր (Gold Personal Systems Partner Gold Imaging and Printing Partner) և արտոնագրված Սերվիս Կենտրոն, Logitech - ընկերության գործընկեյ (Business Partner), APC ընկերության դիստրիբյուտոր, Cisco ընկերության գործընկեր (Select Partner), Kaspersky ընկերության գործընկեր (Business Partner), Oracle ընկերության գործընկեր (Gold Partner), Transcend ընկերության դիստրիբյուտոր, Dell ընկերության գործընկեր, Liebert ընկեյության գործընկեր, LG ընկերության գործընկեր, Philips ընկերության գործընկեր, Evolis ընկերության դիստրիբյուտոր, FSP ընկերոյտյան գործընկեր և Սերվիս Կենտրոն, Lenovo ընկերության գործընկեր:

5. «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն զբաղվում է համակարգչային տեխնիկայի, ցանցային սարքավորումների, սերվերային համակարգերի, ծրագրային ապահովման, տպիչների և օժանդակ նյութերի վաճառքով, ինչպես նաև ցանցերի և համակարգերի նախագծմամբ և տեղադրմամբ: «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն կարող է ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF- Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form) բոլոր այն ապրանքների համար, որով ներկայանում է մրցույթներին, ինչպես նաև «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն հավատարմագրված է ստորև ցուցակի արտադրողների կողմից: HPE-Gold Partner, HP-Gold Personal Systems & Partner Silver Imaging and Printing Partner, Lenovo- BUSINESS PARTNER, Dell Servers- Gold Partner, APC- REGISTERED PARTNER, Sophos- Gold Partner,

Windows/Microsoft- REGISTERED PARTNER, Aruba-Silver Partner, Hitachi-Ex Partner Cisco-SELECT PARTNER, PALO ALTO – INNOVATOR և այլն:

6. «UNICOMP» ընկերությունը հայտնել, որ հանդիսանում է մի շարք ընկերությունների գործընկեր և անհրաժեշտության դեպքում ներկայացնում է արտադրողի հավաստագիր (MAF- Manufacturer's Authorization Letter): Ստորև ներկայացնում եմ մեր գործընկերի ցանկը, որը պարբերաբար թարմացվում է և վերջին տարբերակը կարելի է տեսնել մեր կայքում՝ https://www.unicomp.am/partners/. Cisco Premier Integrator, F5 Silver Partner, Intel Gold Partner, Microsoft Silver in Application Integration, Datacenter, Application Development, HP Inc. Power Services partner and Authorized Service Center, Hewlett Packard Enterprise Platinum Partner and Authorized Service Center, MICROFOCUS, VMware, THALES, ENTRUST, Fortinet, NetApp, APC by Schneider Electric Premiere Partner and Authorized Service Center, Digital Guardian, Symantec, Broadcom, Panduit, Tenable, Tufin, Oneldentity, Qualys, EPSON, DELL, Kyocera Document Solutions Distributor and Authorized Service Center, Yealink Distributor and Authorized Service Center, Yeastar Distributor and Authorized Service Center:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից 08.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ…:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կոմպոզիտիվ սերվերների և տվյալների պահոցների ձեռքբերման նպատակով 26.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային

աճուրդի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց սահմանվել է հետևյալը՝

Ապրանքի			
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**Ամբողջական անվանումը**	**Տեխնիկական բնութագիրը**
1	*48821100/503*	կոմպոզիտիվ սերվերներ	Տեսակ ՀՀ ՊԵԿ-ում առկա HPE Synergy 12000-ում տեղադրելու համար: Պրոցեսորների քանակ Յուրաքանչյուր սերվերի վրա առնվազն երկու հատ: Պրոցեսորի պարամետրեր 2 հատ 20-միջուկանի, 2.1Ghz հաճախականության, 2933MHz հաճախականությամբ DDR4 աջակցմամբ: Պրոցեսորների արտադրողականություն SPEC rate2017 integer result base՝ 223 միավոր: Օպերատիվ հիշողություն Ընդամենը 512ԳԲ՝ 16 միանման DDR4-2933 Dual Rank մոդուլներով: Հիմնական հիշողություն 2 հատ 480ԳԲ 2.5" SSD կրիչ: Ethernet ցանց 1 կոնվերգենտ քարտ 2 Ethernet պորտերով՝ յուրանչյուրը 25/50 Գբիթ/վրկ: Fibre Channel ցանց 1 քարտ 2 Fibre Channel պորտերով՝ յուրանչյուրը 32 Գբիթ/վրկ Այլ պայմաններ. • Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: • Սարքերը և օժանդակ մասերը պետք է լինեն գործարարանային արտադրության: • Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և գործարկումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով, համաձայն արտադրողի կողմից խորհուրդ տրվող ճարտարապետության: • Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը: • Հրավերով պահանջվող սարքերի համար մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF): • Արտադրողի կողմից պետք է գործի 5 տարվա գործարանային երաշխիք՝ 24x7 ռեժիմում արտադրողի համակարգում սերվիս-դեպք գրանցելու հնարավորությամբ և առավելագույնը 4-ժամյա հետադարձ կապով: Վնասված կրիչները փոխարինումից հետո չեն վերադարձվելու մատակարարին կամ արտադրողին, ինչը պետք է արձանագրված լինի արտադրողի կողմից ներառվող գործարանային երաշխիքի նկարագրությունում:
2	*30232230/501*	տվյալների պահոցներ	Կոնտրոլերների նկարագրություն - առնվազն 4 ակտիվ կոնտրոլեր՝ տաք փոխարինման հնարավորությամբ - ընդհանուր 1TiB cache հիշողություն՝ 256GiB յուրաքանչյուր կոնտրոլերի վրա - առնվազն 32 հատ 32Gb Fibre Channel պորտեր - յուրաքանչյուր կոնտրոլերի վրա առնվազն 2 հատ 10Gb Ethernet առանձնացված պորտեր՝ նախատեսված տվյալների ապպարատային ռեպլիկացիայի համար - յուրաքանչյուր կոնտրոլերի վրա առնվազն 4 հատ SAS 12Gb պորտեր՝ նախատեսված սկավառակների դարակների միացման համար: Տեղադրված սկավառակներ 48x1.92TB SSD SAS 2.5" սկավառակներ: Համակարգի աճեցման հնարավորություն - առնվազն 26 հատ NVMe SSD կրիչներ տեղադրելու հնարավորություն - առնվազն 384 հատ SSD սկավառակներ տեղադրելու հնարավորություն - առնվազն 576 հատ HDD սկավառակներ տեղադրելու հնարավորություն - 1.92, 3.84, 7.68, 15.36TB SSD 2.5" սկավառակների աջակցում: Համակարգի ֆունկցիոնալ - ակնթարթային պատճենների ստեղծում (snapshots) - ամբողջական

			պատճեների ստեղծում (snapclones) - համակարգի կառավարման ծրագրային ապահովում - համակարգի արագագործության վերլուծության ծրագրային ապահովում - նեղ հատորների հետ աշխատելու հնարավորություն (Thin Provisioning) - համակարգը տրամաբանական հատորների բաժանելու հնարավորություն - Oracle, Microsoft Exchange, Microsoft SQL, VMware vSphere, Microsoft Hyper-V ծրագրային փաթեթների համար ակնթարթային կոնսիստենտ պատճեների ստեղծման հնարավորություն - VMware vCenter-ի հետ ինտեգրման հնարավորություն - Տվյալների դեդուպլիկացիա և սեղմում (Compression): Տվյալների ռեպլիկացիա - Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա միևնույն մոդելի այլ համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման - Տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա առկա HPE 3PAR 8400 համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման: Համակարգի ադմինիստրավորում Համակարգը պետք է աջակցի "call home" ֆունկցիոնալ, որը թույլ է տալիս՝ - համակարգի խնդիրների դեպքում արտադրողի սերվիսային համակարգում ավտոմատ սերվիս-դեպքի գրանցում - հաշվի առնելով պատվիրատուի մոտ առկա միկրոկոդերի և ծրագրային փաթեթների տարբերակները (version)՝ առկա խորհուրդ տրվող թարմացումների ցանկի ավտոմատ տրամադրում - 10-բալային համակարգով գրել/կարդալու գործողությունների ժամանակ համակարգի արտադրողականության գնահատում: Մալուխներ և փոխարկիչներ Տվյալների պահոցը նաև պետք է ներառի բոլոր կոմպոնենտները արտաքին ենթակառուցվածքներին միանալու համար: Այդ կոմպոնետներն են՝ Ա. Էլեկտրական սնուցման աղբյուրին միացվող մալուխներ բոլոր հոսանքի մուտքերի համար Բ. Փոխարկիչներ տվյալների պահոցների բոլոր օպտիկական պորտերին միանալու համար Գ. Օպտիկական մալուխներ Բ կետում նշված բոլոր փոխարկիչներին միանալու համար Դ. Մալուխներ տվյալների պահոցի բոլոր կոնտրոլերները բոլոր դարակաշարերին միացնելու համար Այլ պայմաններ. • Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: • Սարքերը և օժանդակ մասերը պետք է լինեն գործարարանային արտադրության: • Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և գործարկումը իրականացնում է մատակարարը՝ իր հաշվին և իր միջոցներով, համաձայն արտադրողի կողմից խորհուրդ տրվող ճարտարապետության: • Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը: • Հրավերով պահանջվող սարքերի համար մասնակիցը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիր (MAF) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF): • Արտադրողի կողմից պետք է գործի 5 տարվա գործարանային երաշխիք՝ 24x7 ռեժիմում արտադրողի համակարգում սերվիս-դեպք գրանցելու հնարավորությամբ և առավելագույնը 4-ժամյա հետադարձ կապով: Վնասված կրիչները փոխարինումից հետո չեն վերադարձվելու մատակարարին կամ արտադրողին, ինչը պետք է արձանագրված լինի արտադրողի կողմից ներառվող գործարանային երաշխիքի նկարագրությունում:

Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպությունների պատասխանների համաձայն՝

1. «Իքս – Արթ» ՍՊ Ընկերությունը մասնակցում է պետության կարիքների համար կազմակերպվող գնման ընթացակարգերին և անհրաժեշտության դեպքում պատրաստ է ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF-Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ “Իքս - Արթ” ՍՊԸ-ն հանդիսանում է “DELL Technologies”, “Nexans Cabling Solutions”, “Zyxel Networks”, “Schneider Electric”, “Hewlett Packard Enterprise”, “Cooler Master”, “Thermaltake Technology”, “Ruckus”, “FortiGate” ընկերությունների բիզնես գործընկեր և կարող է վաճառել այդ ընկերությունների արտադրանքը:

2. «ԼանԱր Սերվիս» ընկերությունը հանդիսանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խոշորագույն ընկերություններից մեկը եվ համագործակցում է ոլորտի արտադրողների եվ պաշտոկանա ներկայացուցիչների հետ ինչպես նաեվ ունի անվանական գորշընկերոջ կոչում ոլորտի խոշորագույն արտադրողների մոտ: Հաստատում եմ, որ մեր ընկերության կողմից մատակարարվող ապրանքների համար անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել եվ/կամ (MAF-Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր եվ7կամ (DAF-Distributer's Authorization Form) լիազորագրեր: Ստորև ներկայացնում եմ ոչ ամբողջական ցանկը ընկերությունների, որոնց հետ ԼանԱր Սերվիս ՍՊԸ-ն պաշտոնապես համագործակցում է ըստ դասակարգման՝

Տեխնիկայի արտադրողներ' Server, Storage systems, Desktop PC, Notebooks, Accessories Monitors, Cabling systems, Connection system, HPE, HPI, Dell EMC, Lenovo, Acer, Asus, Molex, Jabra, Moxa, BenQ, Canon, Xerox, Philips, AOC, Bachman, Fiber trade, D-Link, Mikrotik, Ubiquiti, Broadcom, Cisco, Juniper, APC, FSP, Schneider Electric, ...

3. «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն կարող է մասնակցել պետության կարիքների համար կազմակերպվող գնման ընթացակարգերին և անհրաժեշտության դեպքում ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF- Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form): Ստորև ներկայացնում ենք ընկերությունների ոչ ամբողջական ցանկը, որոնց կողմից ներկայացված ապրանքները կարող ենք առաջարկել պաշտոնապես: Hewlett Packard Enterprise /HPE/, Hewlett Packard Incorporate /HPI/, Dell Technologies, Lenovo, NetApp, APC by Schneider Electric, Legrand, Fortinet, Wacom, Philips, Acer, Canon, Kaspersky Labs, Microsoft, Adobe, Microfocus, PTC, ESET և այլն:

4. «Բի Լայն» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Լնոն Քեսապլյանի, հավաստիացնում է, որ կարող է մասնակցել պետության կարիքների համար կազմակերպվող գնման ընթացակարգերին և անհրաժեշտության դեպքում ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF- Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form): «Բի Լայն» ՍՊԸ-ն հանդիսանում է HP Enterprise ընկերության գործընկեր (Platinum Partner) և արտոնագրված Սերվիս Կենտրոն, HP Inc. ընկեյության գործընկեր (Gold Personal Systems Partner Gold Imaging and Printing Partner) և արտոնագրված Սերվիս Կենտրոն, Logitech - ընկերության գործընկեյ (Business Partner), APC ընկերության դիստրիբյուտոր, Cisco ընկերության գործընկեր (Select Partner), Kaspersky ընկերության գործընկեր (Business Partner), Oracle ընկերության գործընկեր (Gold Partner), Transcend ընկերության դիստրիբյուտոր, Dell ընկերության գործընկեր, Liebert ընկեյության գործընկեր, LG ընկերության գործընկեր, Philips ընկերության գործընկեր, Evolis ընկերության դիստրիբյուտոր, FSP ընկերոյտյան գործընկեր և Սերվիս Կենտրոն, Lenovo ընկերության գործընկեր:

5. «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն զբաղվում է համակարգչային տեխնիկայի, ցանցային սարքավորումների, սերվերային համակարգերի, ծրագրային ապահովման, տպիչների և օժանդակ նյութերի վաճառքով, ինչպես նաև ցանցերի և համակարգերի նախագծմամբ և տեղադրմամբ: «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն կարող է ներկայացնել արտադրողի լիազորագիր (MAF- Manufacturer's Authorization Form) կամ պաշտոնական մատակարարի լիազորագիր (DAF- Distributer's Authorization Form) բոլոր այն ապրանքների համար, որով ներկայանում է մրցույթներին, ինչպես նաև «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ն հավատարմագրված է ստորև ցուցակի արտադրողների կողմից: HPE-Gold Partner, HP-Gold Personal Systems & Partner Silver Imaging and Printing Partner, Lenovo- BUSINESS PARTNER, Dell Servers- Gold Partner, APC- REGISTERED PARTNER, Sophos- Gold Partner, Windows/Microsoft- REGISTERED PARTNER, Aruba-Silver Partner, Hitachi-Ex Partner Cisco-SELECT PARTNER, PALO ALTO – INNOVATOR և այլն:

6. «UNICOMP» ընկերությունը հայտնել, որ հանդիսանում է մի շարք ընկերությունների գործընկեր և անհրաժեշտության դեպքում ներկայացնում է արտադրողի հավաստագիր (MAF- Manufacturer's Authorization Letter): Ստորև ներկայացնում եմ մեր գործընկերի ցանկը, որը պարբերաբար թարմացվում է և վերջին տարբերակը կարելի է տեսնել մեր կայքում՝ https://www.unicomp.am/partners/. Cisco Premier Integrator, F5 Silver Partner, Intel Gold Partner, Microsoft Silver in Application Integration, Datacenter, Application Development, HP Inc. Power Services partner and Authorized Service Center, Hewlett Packard

Enterprise Platinum Partner and Authorized Service Center, MICROFOCUS, VMware, THALES, ENTRUST, Fortinet, NetApp, APC by Schneider Electric Premiere Partner and Authorized Service Center, Digital Guardian, Symantec, Broadcom, Panduit, Tenable, Tufin, OneIdentity, Qualys, EPSON, DELL, Kyocera Document Solutions Distributor and Authorized Service Center, Yealink Distributor and Authorized Service Center, Yeastar Distributor and Authorized Service Center:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է

նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումների և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող թվով 6 (վեց) կազմակերպությունների տրված պատասխանները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից մրցույթի հրավերով առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների խմբավորումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը, և միևնույն ժամանակ, սույն դրույթը քննարկելով գնումների օրենսդրության համատեքստում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ խմբավորումը չպետք է հանգեցնի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցության սահմանափակմանը, քանի որ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար՝ անկախ հիմնավոր լինելու կամ չլինելու և հիմնավորվածության աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով), Պատվիրատուն պետք է նախ և առաջ հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները՝ հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Նշված դրույթների կիրառումն ապահովելուց հետո նոր միայն Պատվիրատուն կարող է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել մեկ չափաբաժնում՝ հիմնավորելով խմբավորելու անհրաժեշտությունը, դրա օրինաչափությունն ու հիմնավորվածությունը՝ ելնելով օբյեկտիվ պատճառներից ու այլընտրանքային՝ առանձին բնութագրեր ունեցող

գնման առարկաների տարբեր չափաբաժիններում ներառելու հնարավորության բացակայությունից:

Ամբողջացնելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ նախ և առաջ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու հարցի քննարկումը պետք է դիտարկել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 22-րդ կետի համատեքստում, այնուհետև՝ դիտարկել այն որպես առանձին իրավակարգավորող դրույթ՝ անդրադառնալով հիմնավորվածությանն ու օրինաչափությանը:

Ելնելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքներից, մասնավորապես որ՝ վեճի առարկա հանդիսացող չափաբաժիններով սահմանված բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, ինպես նաև հաշվի առնելով, որ Պատվիրատուի կողմից կատարվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 19.07.2021թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/50 ծածկագրով որոշումը, որով, փաստացիորեն, Հրավերի 1-ին և միակ չափաբաժինը առանձնացվել է 2 (երկու) չափաբաժինների, իսկ վերջիններիս բնութագրերը համապատասխանեցվել են վերը նշված նորմերի դրույթներին, ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների խախտում առկա չէ, ըստ այդմ՝ բողոքով ներկայացված հիմքերն անհիմն են:

Ուստի, վերը նշված եզրահանգումներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չի խախտվել Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները, որպիսի պայմաններում, Հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժիններում փոփոխություններ կատարելու մասին բողոքով ներկայացված պահանջն անհիմն է և ենթակա մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից 08.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**